

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ

Մեր յառաջագիմութեան մի գլխաւոր պայմանն է ժամանակի կանոնաւոր գործածութիւնը. բարոյական օրէնքը պահանջում է ժամանակը գործ դնել մեր պարտքերը կատարելու և հոգով կատարելագործութեւնը:

Ժամանակն է Աստուածային մի թանգագին պարգև՝ հաւասար մեզ շնորհուած հոգեկան և մարմնական ոյժերին և ընդունակութիւններին, որոնց ինչ կերպ գործածութեան մասին մի օր պիտի հաշիւ տանք Աստծուն, ինչպէս մեզ նախագգուշացնում է քանքարների առակը:

Կեանքը կարճատև է, ժամանակը վաղանցուկ, ուստի պիտի ջանալ խելացի կերպով օգտուել ժամանակից. ամեն րոպէ մենք մեռնում ենք, մեր անցեալն արդէն մահինն է. այսօր եթէ լաւ գործենք, քիչ կախում կունենանք վաղուանից. ոչ մի գոյք մերը չէ, միայն ժամանակն է մեր իսկական սեպհականութիւնը. շատ բան կարելի է փոխարինել և վերադարձնել, բայց ժամանակի կորուստը անդառնալի է:

Ժամանակն է միակ բարիքը, որի վերաբերմամբ մենք պիտի ժլատ լինենք. նա է կեանքի թանգագին բարիքներից մինը. նրա անօգուտ գործ ածելը պիտի համարուի շատ վատ շռայլութիւն:

Շատ մարդիկ ժամանակի արժէքը չեն ըմբռնում և շատերը չեն իմանում ինչպէս սպանել ժամանակը, բայց և գանգատւում են թէ կեանքը կարճատև է, մինչդեռ մենք բաւական միջոց ունենք մեր կոչումը կատարելու երկրի վրայ, եթէ զուր չվատնէինք մեր օրերը:

Ով գիտէ ժամանակի արժէքը և կարողանում է նրանից օգտուել, նա երկարացնում է իւր գոյութեան մի-

ջոցը. ժամանակն է մէկն այն բաներից, որ միայն մի անգամ կարելի է գտնել: Ով կամենում է խնայել իւր ժամանակը, նա պիտի գնահատէ իւրաքանչիւր օր, ընթացիկ ժամանակի ոչ մի րոպէ գուր չվատնէ, խաբուսիկ յոյսով աչք դնելով ապագայի վրայ, որ մեր իշխանութեան տակ չէ: Փոքրուց միայն կարելի է վարժուել ժամանակի խնայողութեան և այդ ունակութիւնը միայն կարելի է ձեռք բերել կանոնաւոր կարգապահութեամբ մեր զբաղմունքներին և մեր ամբողջ կենցաղավարութեան մէջ. կանոնաւոր ժամանակի գործածութիւնն ասելով միայն այն չպիտի հասկանալ թէ ամեն ժամ պիտի օգտակարութեամբ անց կացնել, այլ և այն, որ ամեն գործ կատարենք ճիշդ նշանակած ժամին:

Իւրաքանչիւր դէպք բնութեան մէջ և իւրաքանչիւր գործ մարդկային կեանքի մէջ կատարելու համար պէտք ունեն որոշ ժամանակի: Մեր օրական զբաղմունքներին որոշ ժամեր պիտի որոշենք և խիստ ճշտութեամբ հետեւենք մի անգամ սահմանած կարգին: Երբ մենք մեզ գեղեցիկ սովորութիւն ենք իւրացնում ճշտութեամբ կատարելու այն, ինչ որ մեզնից պահանջւում է և խելացի տնտեսութեամբ ենք գործադրում մեր ժամանակը, հեշտանում է և յաջողւում է մեզ ամեն գործ և աներկբայ յառաջադիմում ենք: Սխալ կլինի կարծել թէ աճապարելով աշխատանքի մէջ կարելի է ժամանակը խնայել, ընդ հակառակն աշխատանքը յոգնեցուցիչ և ձանձրալի է լինում, եթէ կատարւում է շտապելով:

Իւրաքանչիւր գործի մասին պիտի առաջուց լաւ խորհել և ապա որոշ նախագծով յառաջ տանել, մինչ դեռ աճապարելով չի կարելի ոչ հիմնովին դատել և ոչ մաքուր կատարել գործը: Աշխոյժ աշխատելու չափաւորութիւնը ձեռք է բերւում սովորութեամբ, որով ոչ շտապում ենք, ոչ դանդաղում:

Անհրաժեշտ է չափ պահպանել աշխատանքի մէջ, որ հանդստութիւնը և զբաղմունքը կանոնաւոր կերպով իրար փոխարինեն:

Նիկողայոս վարդ. Տէր Աւետիքեան